

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղ Շինուհայր

3 հուլիսի 2023թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N3245-Լ հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2023 թվականի հունիսի 9-ի N213-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2022 թվականի հունիսի 19-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) օրենսդրությամբ սահմանված համապատասխան բնագավառներում՝ 2020 թվականի հունիսի 6-ից մինչև 2023 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

1. Հիմք ընդունելով հաստատված հարցաշարերի հիման վրա կազմված արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Տաթև համայնքի ղեկավարն իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Տաթև համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող
աշխատանքային խմբի ղեկավար՝**



Ս. Ավետիսյան

**ՀՀ Սյունիքի մարզի Տաթև
համայնքի ղեկավար՝**



Ս.Լալյան



Հավելված

«Սյունիքի մարզի Տաթև համայնքում իրականացված իրավական
և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման
վերաբերյալ

2023 թվականի հուլիսի 3-ի արձանագրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության համապատասխան բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացում, ընդերքօգտագործում, պաշտպանություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, տրանսպորտ և կապ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության արդյունքները:

(Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N03-Ն հրամանով հաստատված հարցաշարի մասով՝

| Հ/Հ | Հ/ենթահամար | Դրույթների անվանումը | Դրույթի համար հիմք հանդիսացող իրավական նորմը | Պահպանված է, թերի է պահպանված, Պահպանված չէ, Գործառույթ չի իրականացվել | Հայտնաբերված խախտումները (հստակ նշել իրավական ակտի տարբերիչը, ամիսը, ամսաթիվը, անվանումը, համարը, հոդվածը, մասը, կետը, ենթակետը, պարբերությունը) | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---------------------------------|-------------|----------------------|--|--|--|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ | | | | | | |

| | | | | | | |
|---|----|--|---|------------------|---|--|
| 1 | 2) | ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը. | «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մաս | Թերի է պահպանված | Ավագանին ունի ստեղծված մշտական հանձնաժողովներ: Սահմանված կարգով դրանք ձևավորված են: Մշտական հանձնաժողովներին ավագանու անդամների անդամակցությունը փաստված է համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ, սակայն մշտական հանձնաժողովների նիստերի մասին նախկին մեծամասնական համակարգով ընտրված ավագանու մշտական հանձնաժողովների արձանագրություններ չկան: Մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները փաստվում են միայն 2021 թվականի հոկտեմբերի 17-ին համամասնական ընտրակարգով նոր ընտրված ավագանու մասով: | |
| 1 | 9) | համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգի սահմանում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն. | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերություն | Պահպանված չէ | Համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 25-ի N 2-Ա և 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 43-Ա որոշումների մեջ նման ընթացակարգ նախատեսված չէ: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|---|----|--|---|-------------------------|---|---|
| 3 | 2) | <p>ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն (ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը).</p> | <p><<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 83-րդ հոդվածի 2-րդ մաս և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> << օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ և 5-րդ մաս</p> | <p>Թերի է պահպանված</p> | <p>Համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 19-ի N 35-Ա, 2022 թվականի հունիսի 15-ի N 21-Ա և 2023 թվականի ապրիլի 13-ի N 08-Ա որոշումներ:</p> <p>2020թ.-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ բացակայում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացությունը, որը պարտադիր էր համայնքի ավագանու 25.02.2016թ-ի N 2-ա որոշման 30-րդ կետի 3-րդ ենթակետով: 2021,2022 թվականների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները ընդունվել են օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, առանց ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացությունների առկայության:</p> | <p>Ապահովել դրույթի ամբողջական կատարումը:</p> |
|---|----|--|---|-------------------------|---|---|

| | | | | | | |
|---|----|--|---|-------------------------|--|---|
| 4 | 1) | <p>համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների առկայություն (մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը).</p> | <p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս</p> | <p>Թերի է պահպանված</p> | <p>Համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 24-ի N 59-Ա, դեկտեմբերի 22-ի N 82-Ա, 2021 թվականի հունվարի 20-ի N 02-Ա, նոյեմբերի 26-ի N 54-Ա, 2022 թվականի հունիսի 15-ի N 20-Ա, հոկտեմբերի 20-ի N 41-Ա և 2023 թվականի ապրիլի 13-ի N 09-Ա որոշումներ: 2020, 2021, 2022 թվականների բոլոր եռամսյա հաղորդումները ընդունվել են օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ:</p> | <p>Ապահովել դրույթի ամբողջական կատարումը:</p> |
| 4 | 3) | <p>համայնքի ավագանու կողմից իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում, որի հիմնական խնդիրներն են.</p> | <p>«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մաս</p> | <p>Պահպանված չէ</p> | <p>2020թ.-ին բացակայում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, որը պարտադիր էր համայնքի ավագանու 25.02.2016թ-ի N 2-ա որոշման 30-րդ կետի 3-րդ ենթակետով: 2021, 2022 թվականներին բացակայում է ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:</p> | <p>Ապահովել դրույթի ամբողջական կատարումը:</p> |

| | | | | | | |
|---|------|--|---|--------------|---|--|
| 4 | 3-ա. | <p>բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 4 | 3-բ. | <p>բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը, (առկայության դեպքում),</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 4 | 3-գ. | <p>բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|----|------|---|--|------------------|---|---|
| 4 | 3-դ. | բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դ) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 4 | 3-ե. | բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը: | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 9 | 9. | Համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ ավագանու իրականացրած վերահսկողության վերաբերյալ արձանագրության առկայություն: | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ | Թերի է պահպանված | Չկա կոնկրետ հսկողության վերաբերյալ որևէ արձանագրություն, սակայն առկա են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունները, որոշումները, որոնք նույնպես իրականացվող հսկողության բաղադրիչ են: | Այսուհետ ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 17 | 2) | տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգի վերաբերյալ Ավագանու որոշման առկայություն. | <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդված | Պահպանված չէ | Գրանցամատյանները վարվում են թղթային և էլեկտրոնային տարբերակով, սակայն գրանցամատյանները վարելու կարգի վերաբերյալ ավագանու որոշում առկա չէ | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|----|----|--|--|-------------------------|--|---|
| 19 | 1) | <p><<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման վերաբերյալ ավագանու որոշման (որոշումների) համապատասխանությունը <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի աահանջներին.</p> | <p><<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 8-րդ, 10-րդ,13-րդ, 14-րդ, 19-րդ հոդվածներ</p> | <p>Թերի է պահպանված</p> | <p>Սանիտարական մաքրման սխեման բացակայում է:</p> | <p>Կազմել սանիտարական մաքրման սխեման և ներկայացնել հաստատման:</p> |
| 19 | 9) | <p>համայնքի ավագանին հաստատում է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը.</p> | <p><<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս</p> | <p>Թերի է պահպանված</p> | <p>Համայնքի ավագանին հաստատել է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, սակայն ըստ անհրաժեշտության՝ աղբը չի տեսակավորվում</p> | <p>Ապահովել դրույթի ամբողջական կատարումը:</p> |

| | | | | | | |
|----|-----|--|--|-------------------------|--|---|
| 19 | 10) | <p>համայնքի ավագանին հաստատում է սանիտարական մաքրման սխեման, որը պարունակում է համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:</p> | <p><<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդված</p> | <p>Պահպանված չէ</p> | <p>Սանիտարական մաքրման սխեմաները բացակայում են:</p> | <p>Կազմել սանիտարական մաքրման սխեման և ներկայացնել հաստատման:</p> |
| 31 | 31. | <p>Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին ավագանու որոշման առկայություն.</p> | <p><<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետ</p> | <p>Թերի է պահպանված</p> | <p>2021 թվականի վերջում գույքագրման փաստաթղթեր չեն հաստատված</p> | <p>Ապահովել դրույթի ամբողջական կատարումը:</p> |

| | | | | | | |
|----|----|---|--|--------------|---------------|---|
| 38 | 2) | <p>սահմանում է համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները.</p> | <p><<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետ</p> | Պահպանված չէ | Սահմանված չկա | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 38 | 3) | <p>համայնքի ավագանին սահմանում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները.</p> | <p><<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետ, «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մաս</p> | Պահպանված չէ | Որոշում չկա | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 38 | 5) | <p>ավագանին սահմանում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները:</p> | <p>«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մաս</p> | Պահպանված չէ | Որոշում չկա: | Ապահովել դրույթի պահանջների կատարումը: |

| | | | | | | |
|--|----|--|---|------------------|---|---|
| 44 | 4) | ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել է ավագանու որևէ մշտական հանձնաժողովի և մասնակցել դրա նիստերին. | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ | Թերի է պահպանված | <p>Մշտական հանձնաժողովներին ավագանու անդամների անդամակցությունը փաստված է համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ, սակայն մշտական հանձնաժողովների նիստերի մասին նախկին մեծամասնական համակարգով ընտրված ավագանու մշտական հանձնաժողովների արձանագրություններ չկան:</p> <p>Մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները փաստվում են միայն 2021 թվականի հոկտեմբերի 17-ին համամասնական ընտրակարգով նոր ընտրված ավագանու մասով:</p> | X |
| ԳԼՈՒԽ 2 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | | | | |

| | | | | | |
|--|--|--|--|--|--|
| | | | | | |
|--|--|--|--|--|--|

| | | | | | | |
|----|-----|--|---|--------------|----------------------|--|
| 48 | 22) | <p>«Կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության</p> | <p>«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ</p> | Պահպանված չէ | Սխեման բացակայում է: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
|----|-----|--|---|--------------|----------------------|--|

| | | | | | | |
|----|------|--|---|------------------|--|--|
| 55 | 55. | Համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում. | <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդված | Թերի է պահպանված | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 55 | 2) | համայնքի ղեկավարն կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից. | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մաս | Թերի է պահպանված | համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձ առկա չէ | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 55 | 2-ա. | բյուջետային ուղերձը ներառում է համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի բ) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|----|------|--|--|--------------|---|--|
| 55 | 2-բ. | <p>բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումը, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի (պակասուրդի) կամ հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային գույքանիշների հետ.</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի գ) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 55 | 2-գ. | <p>բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝ իրավական հիմքը. բովանդակությունը. խնդիրները և նպատակները. կատարման փուլերը և ժամկետները,</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի դ) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|----|------|--|---|--------------|---|--|
| 55 | 2-դ. | բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 55 | 2-ե. | բյուջետային ուղերձը ներառում է բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի գ) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 55 | 2-զ. | բյուջետային ուղերձը ներառում է պետական բյուջեի նախագծում կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին, | <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի է) կետ | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | | | | | | |
|----|------|--|--|--------------|---|--|
| 55 | 2-է. | <p>բյուջետային ուղերձը ներառում է տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին.</p> | <p><<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի թ) կետ</p> | Պահպանված չէ | X | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
|----|------|--|--|--------------|---|--|

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

| | | | | | | |
|----|----|---|--|------------------|---|---|
| 56 | 4) | <p>իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.</p> | <p><<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետ</p> | Պահպանված չէ | <p>Չկա համայնքի ԱԻ և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով, որոշումով հաստատված հանձնաժողովի կազմը, կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը:</p> | <p>Ստեղծել համայնքի ԱԻ և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով, որոշումով հաստատել հանձնաժողովի կազմը, կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը</p> |
| 56 | 6) | <p>հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում.</p> | <p><<Հրդեհային անվտանգության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետ</p> | Թերի է պահպանված | <p>Համայնքի բնակչությունը ներգրավվում է համայնքում առաջացած հրդեհների հրդեհաշիջման աշխատանքներին, սակայն չի իրականացվում բնակչության և կամավորական խմբերի ուսուցում</p> | <p>Իրականացնել բնակչության և կամավորական խմբերի ուսուցում</p> |
| 56 | 7) | <p>հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը.</p> | <p><<Հրդեհային անվտանգության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետ</p> | Թերի է պահպանված | | <p>Համայնքի ղեկավարի որոշումով հաստատել հրդեհ կամավորական ջոկատների կազմը, նրանց գործառույթները</p> |

| | | | | | | |
|----|-----|---|---|------------------|---|--|
| 56 | 8) | հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը. | <<Հրդեհային անվտանգության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետ | Թերի է պահպանված | X | X |
| 56 | 10) | կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում. | <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ | Թերի է պահպանված | | Համայնքի ղեկավարի որոշումով ստեղծել համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհուրդ, մշակել համայնքի Աղետների Ռիսկի Կառավարման պլանը և Սյունիքի ՄՓՎ հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ղեկավարի որոշումով հաստատել այն |
| 56 | 11) | կազմակերպում և իրականացնում են համայնքում քաղաքացիական պաշտպանությունը. | <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ | Թերի է պահպանված | Առկա է համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 19-ի թիվ 100-Ա որոշումը՝ համայնքի ՔՊ պլանը հաստատելու մասին: | ճշգրտել համայնքի ՔՊ պլանը |
| 56 | 12) | իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը. | <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետ | Թերի է պահպանված | | ճշգրտել համայնքի տարահանման պլանը, բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկները |